

ՇԵՔԻ ԵՐՐՈՐԴ ԵՎ ՉՈՐՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ՊԱՏՌՎԱԾՔՆԵՐԻ ՎԱՐՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Սույն ուղեցույցի նպատակն է տրամադրել ապացույցների վրա հիմնված տեղեկություններ և ապացուցողական խորհուրդներ շեքի երրորդ և չորրորդ աստիճանի պատռվածքների վերաբերյալ, և բարելավել տվյալ խմբի պացիենտների վարման ելքերը:

Մեթոդաբանություն

Սույն կլինիկական ուղեցույցը մշակվել է Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից: Ուղեցույցի գրականական աղբյուր են հանդիսացել Մեծ Բրիտանիայի մանկաբարձ-գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG; The Management of Third- and Fourth-Degree Perineal Tears) 2015 թվականին հրատարակված ուղեցույցը, ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում, հիմք է ընդունվել Մեծ Բրիտանիայի մանկաբարձ-գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG) կողմից առաջարկվող դասակարգումը (Տես Հավելված 1): Ուղեցույցի խորհուրդները ձևակերպելիս կիրառվել է խորհուրդների ուժի գնահատման հնգաստիճան համակարգ՝ «A», «B», «C», «D», որոնք հիմնված են բարձրից մինչև ցածր որակի ապացուցողական տվյալների վրա, և «I», որը հիմնված է ուղեցույցը մշակող աշխատանքային խմբի կլինիկական փորձի վրա: Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայն միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է շեքի երրորդ և չորրորդ աստիճանի պատռվածքների վարման մեջ ներառված մասնագետների համար՝ մանկաբարձ-գինեկոլոգներ:

Արդյունքներ

Սույն ուղեցույցում ներկայացված են շեքի երրորդ եվ չորրորդ աստիճանի պատռվածքների վարման վերաբերյալ ապացուցողական խորհուրդներ, որոնք օգնում են կլինիկական գործունեությունում որոշումներ կայացնելիս, ինչպես նաև առաջարկվել են գործնական ներդրման ուղիներ և աուդիտի ցուցանիշներ:

Հետևություններ

Ապացույցների վրա հիմնված կլինիկական խորհուրդները կօգնեն բարելավել են շեքի երրորդ եվ չորրորդ աստիճանի պատռվածքներով պացիենտների վարման ելքերը:

Բանալի բառեր

Ապացուցողական բժշկություն, ցուցումների ուսումնասիրման, ստեղծման և գնահատման դասակարգման համակարգ, շեքի պատռվածքներ

Պատասխանատու համակարգող

Պողոսյան ԱՊՊ, բՈՒԹԹ, «Էրեբունի» բժշկական կենտրոնի ծննդօգնության գծով փոխտնօրեն

Աշխատանքային խմբի անդամներ

- [Գյուլխասյան Վ.Մ. բ.գ.թ., դոց., ՎԱՊՄԳՀԻ Օպերատիվ գինեկոլոգիայի բաժանմունքի վարիչ](#)
- [Հովհաննիսյան Ա. Գ., մանկաբարձ-գինեկոլոգ, Արարատի ԲԿ](#)
- [Դունամայան Ա. Ա., Մ. Հերացու անվ. Երևանի պրտական բժշկական համալսարանի Մանկաբարձության գինեկոլոգիայի 3-րդ ուսումնական տրավա կլինիկական օրդինատոր ՀԿԿ](#)
- [ՀԿԿ](#)
- [գԻԿԿ](#)
-

- Formatted: Line spacing: 1,5 lines
- Formatted: Armenian
- Formatted: List Paragraph, Line spacing: 1,5 lines, Bulleted + Level: 1 + Aligned at: 0,63 cm + Indent at: 1,27 cm
- Formatted: Font: (Default) MS Mincho, Armenian
- Formatted: Font: (Default) MS Mincho, Armenian
- Formatted: Font: (Default) MS Mincho
- Formatted: Font: (Default) MS Mincho
- Formatted: Font: (Default) MS Mincho
- Formatted: Font: (Default) MS Mincho
- Formatted: Armenian
- Formatted: Bulleted + Level: 1 + Aligned at: 0,63 cm + Indent at: 1,27 cm
- Formatted: Armenian
- Formatted: Left, Right: 0 cm, Space Before: 0 pt, After: 8 pt, Bulleted + Level: 1 + Aligned at: 0,63 cm + Indent at: 1,27 cm, Tab stops: Not at 1 cm
- Formatted: Armenian

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը հայտարարում է շահերի բախման բացակայության վերաբերյալ: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները ֆինանսավորվել են ՀՀ ԱՆ կողմից: ~~Ֆինանսավորող՝ ֆինանսավորող~~ կազմակերպությունը չի ունեցել որևէ ազդեցություն փաստաթղթի ~~պարունկաության~~ բովանդակության կամ ձևավորման վրա:

Շնորհակալական խոսք

Աշխատանքային խումբը իր երախտագիտությունն է հայտնում ուղեցույցների մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գնահատականը տրամադրած գործընկերներին:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Դասակարգում և ~~տեմինաբանություններ~~ մինաբանություն

ՀՄՄ-ի պրոֆիլակտիկական և կանխարգելումը

ՀՄՄ-ի կանխատեսումը

ՀՄՄ-ի կանխարգելումը

Էպիզիոտոմիա

Շեքի պաշտպանություն

Տաք կոմպրեսներ

Շեքի մերսում անտենատալ և ծննդաբերության 2-րդ շրջանում

ՀՍՄՎ-ի ախտորոշումը

ՀՍՄՎ-ի վերականգնումը

Հիմնական առանձնահատկությունները

Անոռեկտալ լորձաթաղանթի վերականգնման վերականգնման տեխնիկա

Հետանցքի ներքին սեղմանի վերականգնման տեխնիկա

Հետանցքի արտաքին սֆինտերի վերականգնման տեխնիկա

Կարանյութի ընտրություն Վիրաբուժական ունակություն

Հետվիրահատական վարումը

Կանխատեսում

Հաջորդող ծննդաբերությունը

Ռիսկերի վարումը

Գրականության ցանկ

Հավելված 1

Հապավումներ

ՀԱՍ՝ հետանցքի արտաքին սեղման

ՀՆՍ՝ հետանցքի ներքին սեղման

ՀՍՄՎ՝ հետանցքի սեղմանի մանկաբարձական վնասում

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում

ՈւՁՀ՝ ուլտրաձայնային հետազոտություն

NICE՝ Մեծ Բրիտանիայի Առողջության և բժշկական սպասարկման որակի ինստիտուտ
RCOG՝ Մեծ Բրիտանիայի մանկաբարձների և գինեկոլոգների թագավորական քոլեջ
PDS՝ պոլիդիոքսանոն

Նախաբան

Հետանցքի սեղմանի մանկաբարձական վնասման (ՀՍՄՎ) տարածվածությունը և
Անգլիայում եռապատկվել է 1.8%-ից մինչև 5.9% 2000-2012 թ-ին [1]: Ընդհանուր առմամբ
Մեծ Բրիտանիայում տարածվածությունը 2.9% է (0-8%), որից առաջնածինները 6.1% է,
բազմածինները 1.7% [2]:

Իրազեկության և վերապատրաստման բարձրացման դեպքում կարծես թե աճում է
հետանցքի սեղմանի վնասվածքների հայտնաբերումը: Երրորդ և չորրորդ աստիճանի
շեքի պատվածքների աճի միտումը պարտադիր չէ, որ լինի վատ խնամքից: Այն կարող է
լինել նաև կարճ ժամկետում, լավ խնամված դեպքերում [3]:

Մանկաբարձները, ովքեր ունեն համապատասխան վերապատրաստում ավելի
հետևողական են, ունեն բարձր չափանիշներ հետանցքի սեղմանի պատվածքների
վերականգնման ոլորտում և նպաստում են հետանցքի սեղմանի վնասվածքների հետ
կապված հիվանդությունների նվազեցմանը [4]:

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն կլինիկական ուղեցույցը մշակվել է Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և
նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից: Ուղեցույցի գրականական
աղբյուր են հանդիսացել Մեծ Բրիտանիայի մանկաբարձ-գինեկոլոգների
թագավորական քոլեջի (RCOG; The Management of Third- and Fourth-Degree Perineal

Tears) 2015 թվականին հրատարակված ուղեցույցը, ինչպես նաև PubMed, EMBASE, Cochrane Library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարանների արդի տվյալները: Համացանցում որոնումը կատարվել է անգլերեն լեզվով, օգտագործելով հետևյալ բանալի բառերը՝ ‘human’, ‘female’, ‘childbirth’, ‘obstetric’, ‘perineum’, ‘third degree’, ‘fourth degree’, ‘anal sphincter’, ‘tear’, ‘injury’, ‘rupture’, ‘damage’, ‘incontinence’, ‘faecal’, ‘anal’, ‘repair’, ‘surgery’ և ‘sutures’: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս սկզբնաղբյուր հանդիսացող փաստաթղթերում, հիմք է ընդունվել Մեծ Բրիտանիայի մանկաբարձ-գինեկոլոգների թագավորական քոլեջի (RCOG) կողմից առաջարկվող դասակարգումը (Տես Հավելված 1): Ուղեցույցի խորհուրդները ձևակերպելիս կիրառվել է խորհուրդների ուժի գնահատման հնգաստիճան համակարգ՝ «A», «B», «C», «D», որոնք հիմնված են բարձրից մինչև ցածր որակի ապացուցողական տվյալների վրա, և «I», որը հիմնված է ուղեցույցը մշակող աշխատանքային խմբի կլինիկական փորձի վրա: Ուղեցույցի տեղայնացման գործընթացը իրականացվել է համաձայան միջազգային ADAPTE մեթոդաբանության: Բոլոր խորհուրդները քննարկվել և հավանության են արժանացել Հայաստանի մանկաբարձ-գինեկոլոգների և նեոնատոլոգների ասոցիացիայի անդամների կողմից անդամների կողմից (արձանագրությունը կցվում է): Սույն փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց: Ուղեցույցը նախատեսված է շեքի երրորդ եվ չորրորդ աստիճանի պատռվածքների վարման մեջ ներառված մասնագետների համար՝ մանկաբարձ-գինեկոլոգներ:

Դասակարգում և տեմինաբանություն

Հետանցքի սեղմանի ցանկացած մանկաբարձական վնասման դեպքում խորհուրդ է տրվում կիրառել սույն Ուղեցույցում տրվող դասակարգումը: (խորհուրդի ուժը՝ D)

Եթե կա կասկած երրորդ աստիճանի պատռվածքի դասակարգման մեջ, ապա խորհուրդ է տրվում այն դասակարգել ավելի բարձր աստիճանի, քան ավելի ցածր: (խորհուրդի ուժը՝ I)

Աղյուսակ 1-ում տրվող դասակարգումը նկարագրվում է Սուլթանի կողմից, որը ընդունվել է միջազգային խորհրդակցության և RCOG-ի կողմից [5,6]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 4)**

Աղյուսակ 1

Պատուվածքի աստիճանը	Նկարագրությունը
1	Վնասված են շեքի մաշկը կամ հեշտոցի լորձաթաղանթը:
2	Վնասված են շեքի մկանները, բայց վնասված չէ հետանցքի սեղմանը:
3	Շեքի պատուվածք հետանցքի սեղմանի հետ միասին:
3a	Ավելի քան 50 տոկոսով պակաս է արտաքին հետանցքի սեղմանի պատուվածքի հաստությունը:
3b	Ավելի քան 50 տոկոսով ավել է արտաքին հետանցքի սեղմանի պատուվածքի հաստությունը:
3c	Առկա է և արտաքին, և ներքին հետանցքի սեղմանի պատուվածք:
4	Հետանցքի սեղմանի համալիր պատուվածք, որը ներառում է արտաքին և ներքին հետանցքի սեղմանը և անորեկտալ լորձաթաղանթը:

Հետանցքային խողովակի ներքին մակերեսը փոփոխվում է իր երկայնքով սաղմնաբանական ծագման պատճառով: Պրոքսիմալ հետանցքային խողովակը կապակցված է հետանցքային լորձաթաղանթին, մինչդեռ հետանցքի խողովակի դիստալ հատվածի 1-1.5 սմ-ը կապակցված է փոփոխված սկվամոզ էպիթելի հետ [7]: Շփոթությունից խուսափելու համար հետանցքային լորձաթաղանթ տերմինը օգտագործվում է հետանցքի էպիթելի փոխարեն:

Այս ուղեցույցում երրորդ և չորրորդ աստիճանի պատռվածքները ընդգրկվում են ՀՄՄ-ի մեջ:

Հետանցքի անբավարարությունը սահմանվում է գազերի և/կամ կղանքի ակամա արտահոսքի դեպքում, որը ազդում է կյանքի որակի վրա [8]:

Հետանցքի ներքին սեղմանը մեծ դեր ունի հետանցքի սեղմանի ֆունկցիայի պահպանման մեջ: Պրոսպեկտիվ ուսումնասիրությունը ներառում է 531 կանանց ՀՄՄ-ից հետո, որոնք 3c/4 պատռվածքի դեպքում ունեցել են վատ արդյունք ($P < 0.05$), համեմատած այն կանանց, ովքեր ունեն 3a/3b աստիճանի պատռվածք, որոնց մոտ նկատվել է ախտանիշների, հետանցքի մանոմետրիայի և կյանքի որակի լավացում [9]: Այլ պրոսպեկտիվ ուսումնասիրություն է անցկացվել 125 կանանց դեպքում, ովքեր ունեցել են ՀՄՄ, ասվում է, որ զգալիորեն ավելացել է հետանցքի անբավարարությունը ($P < 0.001$) այն կանանց մոտ, ովքեր ունեցել են 3b և 4-րդ աստիճանի պատռվածք համեմատած 3a-ի հետ [10]: Երրորդ պրոսպեկտիվ ուսումնասիրությունը 500 կանանց մոտ է, որը տևել է 3 ամիս, ցույց է տվել, որ հետանցքի ներքին սեղմանի հաստության թերության դեպքում (մասնակի հաստության թերությունը ավելի մեծ քան մեկ քառակուսի կամ ՀՆՍ-ի լրիվ հաստությունը), դրսևորվում է խիստ անզսպվածություն (OR 5.1, 95%, CI 1.5-22.9) [11]: Մեկ ռետրոսպեկտիվ լայն նկարագրական ուսումնասիրություն 66 կանանց հետ, ում հետևել են 5 տարի, ցույց է տվել, որ այն կանայք ովքեր ունեն ՀՆՍ-ի և ՀԱՍ-ի կոմբինացված վնասվածք ($n=6$), ունեն ավելի վատ անզսպվածություն ($p < 0.05$) և ավելի քիչ հետանցքի ճնշում ($p=0.04$) քան այն կանայք, ովքեր ունեցել են միայն ՀԱՍ վնասվածք ($n=10$) [12]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)**

ՆԱՍ-ի ներառումը վերը նշված դասակարգման մեջ թույլ կտա տարբերակելու ՀՆՍ-ի հետ կապված ապագա անզսպվածությունը միայն ՀԱՍ-ի հետ կապված անզսպվածության հետ: Հայտնի է, որ ՀՆՍ-ի բացահայտումը կարող է դժվար լինել սուր գինեկոլոգիական վնասվածքների դեպքում, սակայն ամեն դեպքում պետք է ամեն ինչ արվի բացառելու և հաստատելու ՀՆՍ-ի վնասվածքը: Արձանագրել ՀԱՍ-ի վնասվածքի աստիճանը (ավելի շատ կամ քիչ 50%-ից) պետք է հնարավոր լինի բոլոր դեպքերում: Եթե ինչ-որ մեկը վստահ չէ, թե արդյոք վնասվածքը ավելին է քան 50%-ը թե ոչ, ապա այն պետք է դասակարգել որպես 3b աստիճան, ռեկտալ պատռվածքի թերագնահատումից խուսափելու համար:

Ռեկտալ անցքի պատուվածք: Եթե պատուվածքը ներառում է հետանցքային լորձաթաղանթը, բայց չի ներառում հետանցքի սեղմանը, ապա դա չի սահմանվում չորրորդ աստիճանի **պատվածքպատուվածք:** Դա պետք է գրանցվի որպես ռեկտալ անցքի պատուվածք: Եթե այն չի հայտնաբերվել և չի վերականգնվել այս տեսակի պատուվածքը, ապա այն կարող է հանգեցնել ռեկտոլագինալ խուղակի [13]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 4)**

ՀՍՄՎ-ի պրոֆիլակտիկան և կանխարգելումը

ՀՍՄՎ-ի կանխատեսումը

Բժիշկները պետք է տեղեկացված լինեն ՀՍՄՎ-ի ռիսկի գործոնների մասին: (խորհուրդի ուժը՝ I)

Բժիշկները պետք է տեղեկացված լինեն, որ ռիսկի գործոնները թույլ չեն տալիս հստակ կանխորոշել ՀՍՄՎ-ը: (խորհուրդի ուժը՝ D)

Ռիսկի գործոններից են [1,14-16] (Ապացուցողականության մակարդակը՝ 3)՝

- ասիական էթնիկ պատկանելիություն [1] (OR 2.27, 95% CI 2.14-2.41)
- անամնեզում ծննդաբերություններ [15] (RR 6.97, 6.97, 95% CI 5.40-8.99)
- 4 կգ-ից ավել երեխայի ծնունդ [1] (OR 2.27, 95% CI 2.18-2.36)
- **ուսերի դիստոցիա [1]** (OR 1.90, 95% CI 1.72-2.08)
- պտղի հետին ծոծրակային տեսակ [15] (RR 2.44, 95% CI 2.07-2.89)
- **ծննդաբերության ձգձգված երկրորդ շրջան [15]**
 - երկրորդ շրջանի տևողությունը 2-3 ժամ (RR 1.47, 95% CI 1.20-1.79)
 - երկրորդ շրջանի տևողությունը 3-4 ժամ (RR 1.79, 95% CI 1.43-2.22)
 - երկրորդ շրջանի տևողությունը >4 ժամ (RR 2.02, 95% CI 1.62-2.51)
- **գործիքային ծննդաբերություն [1]**՝
 - վակուում էքստրակցիա առանց **էպիգիոտիմիայի-էպիգիոտոմիայի** (OR 1.89, 95% CI 1.74-2.05)
 - վակուում էքստրակցիա **էպիգիոտիմիայով-էպիգիոտոմիայով** (OR 0.57, 95% CI 0.51-0.63)

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

- մանկաբարձական արքանների տեղադրում առանց **էպիգիտոմիայի էպիգիտոմիայի** (OR 6.53, 95% CI 5.57-7.64)
- մանկաբարձական արքանների տեղադրում **էպիգիտոմիայով էպիգիտոմիայով** (OR 1.34, 95% CI 1.21-1.49)

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

ՀՄՄ-ի ռիսկի գործոնները գնահատվել են ռետրոսպեկտիվ **հետազոտությաններում հետազոտություններում** 123 կանանց մոտ, ովքեր տարել են 3-րդ կամ 4-րդ աստիճանի պատովածք և 123 կանանց՝ առանց ՀՄՄ-ի: Հեղինակները եկել են այն եզրակացության, որ հաշվարկային համակարգը, որը հիմնված է անալիզների արդյունքում ստացված ռիսկի գործոնների վրա՝ հայտնաբերելու կանաց, ովքեր ռիսկի խմբի մեջ են, այդքան էլ գործնականում կիրառելի չեն [16]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 2-)**

Կա սահմանափակ հիմնավորում ռիսկի և կրկնվող ՀՄՄ-ի միջև: Լայն ռետրոսպեկտիվ հետազոտությունները ցույց են տվել, որ հետագա հղիության **բնտացքում ընթացքում** կա 5.51 (95% CI 5.18-5.86) հավանականություն կրկնվող ՀՄՄ-ի համար [17]: Հետագա հղիությունների ընթացքում կրկնվող ՀՄՄ-ի համար ռիսկի գործոններ են հանդիսանում ասիական էթնիկ պատկանելիությունը, ծննդաբերություն մանկաբարձական արքանների կիրառմամբ և ծնվող պտղի քաշը 4 կգ և ավելի: **(Ապացուցողականության մակարդակը՝ 2++)**

ՀՄՄ-ի կանխարգելումը

Բժիշկները պետք է կնոջը բացատրեն, որ էպիգիտոմիայի պաշտպանական դերը վիճելի է: (խորհուրդի ուժը՝ C)

Մեդիոլատերալ էպիգիտոմիան պետք է **քննարկել ղիտարկել գործիքային ծննդաբերությունների ժամանակ: (խորհուրդի ուժը՝ D)**

Formatted: Highlight

էպիգիտոմիայի ցուցման դեպքում խորհուրդ է տրվում կիրառել **մեդիոլատերալ մեդիալատերալ տեխնիկան՝ ուշադրություն դարձնելով, որ անկյունը միջին գծի հետ կազմի 60 աստիճան, երբ շեքը ձգված է: (խորհուրդի ուժը՝ D)**

Շուրջհետանցքային պաշտպանությունը գլխի դրսևորման ժամանակ կարող է պաշտպանական դեր ունենալ: (խորհուրդի ուժը՝ C)

Տաք կոպրեսները կոմպրեսները ծննդաբերության 2-րդ շրջանում նվազեցնում են ՀՍՄՎ-ի ռիսկը: (խորհուրդի ուժը՝ A)

Էպիզիոտոմիա

Այն փաստը, արդյոք էպիզիոտոմիան կանխարգելում է ՀՍՄՎ-ը և/կամ հետանցքային անլիարժեքությունը, վիճելի է: HES (Hospital Episode Statistics) հետազոտությունները ցույց են տվել, որ էպիզիոտոմիան ասոցացվում է ՀՍՄՎ-ի ամենափոքր ռիսկի հետ: Որոշ հետազոտություններ ցույց են տալիս դրա պաշտպանիչ ազդեցությունը, իսկ որոշները՝ ոչ: Այնուամենայնիվ, կա ապացույց, որ մեդիոլատերալ էպիզիոտոմիան ցանկալի է կիրառել գործիքային ծննդաբերությունների ժամանակ, քանի որ այն ունի պաշտպանիչ ազդեցություն ՀՍՄՎ-ի համար [18-20]: (Ապացուցողականության մակարդակը՝ 2-)

Էպիզիոտոմիայի կազմած անկյունը միջին գծի հետ կարևոր է ՀՍՄՎ-ի հաճախականությունը նվազեցնելու հարցում: NICE-ը առաջարկում է էպիզիոտոմիայի անկյունը միջին գծից 45-60 աստիճան: Համենայն դեպս, Կալիսի կողմից կատարված հետազոտությունը ենթադրում է, որ կարեր դրման 40-60 աստիճան անկյունը ավելի կարևոր է, քան կտրելու 45-60 աստիճան անկյունը: Սակայն դա դժվար է **իրականացնել իրականացնել** գլխի դրսևորման ժամանակ, երբ շեքը ամբողջությամբ ձգված է: Ծննդաբերության ժամանակ կատարված էպիզիոտոմիան 40 աստիճան անկյան տակ, ծննդաբերությունից հետո դառնում է 22 աստիճան անկյուն, որը շատ մոտ է միջին գծին պաշտպանիչ լինելու համար: Ծննդաբերության ժամանակ կատարված էպիզիոտոմիան 60 աստիճան անկյան տակ բերում է ծննդաբերությունից հետո 45 աստիճան անկյան առաջացման: Հետազոտությունները ցույց են տվել, որ մանկաբարձուհիները և բժիշկները անկարող են ճիշտ հաշվարկել ապահով մեդիոլատերալ էպիզիոտոմիայի համար պահանջվող անկյունը և երկարությունը: Ոչ մի մանկաբարձուհի և բժիշկների 22%-ը միայն ունակ են կատարել ճիշտ մեդիոլատերալ էպիզիոտոմիա: Էպիզիոտոմիաներից միայն 13%-ն է ծննդաբերությունից հետո 40 աստիճան և ավելի անկյուն կազմում: Հատուկ տեսքով ստեղծված մկրատները, որոնք ապահովում են 60

աստիճան անկյան տակ կատարված կտրվածք, թույլ են տալիս ապահովել էպիդիոտոմիայի ճիշտ անկյունը: [21-28] (Ապացուցողականության մակարդակը՝ 3)

Շեքի պաշտպանություն

NICE-ի «Intrapartum Care» ուղեցույցում գտնում են, որ չկա տարբերություն «ձեռքը պատրաստ» (hands poised) կամ «ձեռքը շեքի վրա» (hands on) տեխնիկաների միջև որպես ՀՍՄՎ-ի կանխարգելման միջոց [23]: Վերջերս, որոշ ծրագրերի կիրառմամբ կատարված ինվազիվ հետազոտությունները, որոնք նվազեցնում են ՀՍՄՎ-ի հաճախականությունը, նկարագրում են պերինեալ պաշտպանության "ձեռքերը շեքի վրա" տեխնիկան [29,30]: Դրանք են (Ապացուցողականության մակարդակը՝ 2+)

1. ձախ ձեռքով պտղի գլխի ծնվելու արագության **իջեցումնվազեցում**
2. **աջ ձեռքը պաշտպանում է շեքը**
3. գլխի դրսևորման ժամանակ մայրը ուժ չի գործադրում
4. մտածել էպիդիոտոմիայի մասին (ռիսկի խմբեր և ճիշտ անկյուն)

Formatted: Armenian

Շեքը պաշտպանող ~~ամենաէֆֆեկտիվ ամենաարդյունավետ~~ մեթոդը ~~անհայտ էհայտնի չէ~~: Ռիտգեն-ի հնարքը ավելի լավ պաշտպանող ~~էֆֆեկտէֆեկտ~~ չունի քան ստանդարտ հնարքները [31]: (Ապացուցողականության մակարդակը՝ 1+)

Այնուամենայնիվ, պերինեալ աջակցությունը պետք է խրախուսվի, ի տարբերություն ~~"hands poised" և "hands off"-ի~~, քանի որ այն պաշտպանում է շեքը նվազեցնում է ՀՍՄՎ-ի հաճախականությունը [29,30]: (Ապացուցողականության մակարդակը՝ 2+)

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Formatted: Armenian

Տաք կոմպրեսներ

Կորբեյնի շտեմարանի հետազոտությունները գտել են, որ ծննդաբերության երկրորդ շրջանում տաք կոմպրեսների կիրառումը թույլ է տալիս **իջեցնել** ՀՍՄՎ-ի հաճախականությունը [32]: Հետազոտությունների արդյունքները (1525 կին) ցույց տվեցին, որ տաք կոմպրեսները **նշանակալիսնշանակալի** իջեցնում են 3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածքների հաճախականությունը (RR 0.48, 95% CI 0.28–0.84):

Միջամտությունը իրենից ներկայացնում է կծկումներից դուրս և կծկումների ընթացքում շեքի վրա տաք կոմպրեսի պահում: (Ապացուցողականության մակարդակը՝ 1+)

Շեքի մերսում անտենարալ և ծննդաբերության 2-րդ շրջանում

Շեքի մերսումը հղիության վերջին ամսում առաջարկվել է որպես հնարավոր մեթոդ, որը թույլ կտա շեքի հյուսվածքներին ավելի հեշտ ձգվել ծննդաբերության ընթացքում: Կորքեյնի հետազոտությունները ցույց են տվել, որ այն կանանց մոտ, ովքեր կատարել են շեքի մերսում հղիության վերջին ամսում (2497 կին), ավելի քիչ են հանդիպել այնպիսի վնասվածքներ, որոնք կարելու կարիք է եղել [33]: Կանանց մոտ, ովքեր կատարել են շեքի մերսում, ավելի հազվադեպ է **խնամվել** էպիզիոտոմիայի կարիք: Այս հետազոտությունները վերաբերվում են այն կանանց, ովքեր չեն ունեցել նախորդող հեշտոցային ծննդաբերություններ: Ծննդաբերության 2-րդ շրջանում շեքի մերսումն պաշտպանիչ էֆֆեկտի մասին տվյալները վերջնական չեն [34]: (Ապացուցողականության մակարդակը՝ 1-)

ՀՍՄՎ-ի ախտորոշումը

Բոլոր կանայք, ովքեր ունենում են հեշտոցային ծննդաբերություն, գտնվում են ռիսկի խմբում ՀՍՄՎ-ի և իզոլացված ռեկտալ «կոնականցբային» **(անալ սեղմանը հետակալ է սակայն լորձաթաղանթը վնասված է)** վնասվածքների համար: Ուստի, **մինչև կարելը** նրանք պետք է անցնեն համակարգված հետազոտություն, որը ներառում է **ռոդիդադիթայինուղիդ աղիքային** մատնային հետազոտությունը՝ գնահատելու համար պատռվածքի աստիճանը **մինչև կարելը**: (խորհուրդի ուժը՝ I)

Համաձայն NICE-ի ուղեցույցների, նախքան գենիտալ տրավմաների գնահատելը, բժիշկները պետք է [23]՝

- բացատրեն կնոջը՝ ի՞նչ են պլանավորում անել և ինչո՞ւ,
- առաջարկեն ինհալացիոն անզգայացում,
- ապահովեն լավ լուսավորություն,

Formatted: Not Highlight
Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian

Formatted: Armenian
Formatted: Armenian
Formatted: Armenian

- կնոջը տալ հարմարավետ դիրք, որում լավ տեսանելի կլինեն սեռական օրգանները:

Ձննումը պետք է կատարել շատ զգույշ և անմիջապես ծննդաբերությունից հետո: Եթե ծննդաբերությունից հետո հայտնաբերվել է վնասվածք, ապա պետք է անցնել համակարգային զննման, որն ընդգրկում է նաև ռեկտալ զննում:

Գենիտալ վնասվածքի գնահատումը իր մեջ պետք է ներառի [13]

- բուժաշխատողը պետք է բացատրի, թե ինչ է պատրաստվում անել և ինչու
- կինը պետք է հաստատի, որ տեղային ցավազրկումը գործում է
- վնասվածքի վիզուալ գնահատում, վնասվածքի մեջ ներառված կառուցվածքների հայտնաբերում, վնասվածքի գազաթի որոշում և արյունահոսության գնահատում
- ռեկտալ հետազոտություն, որը թույլ է տալիս գնահատել, արդյոք վնասվել են ռեկտալ արտաքին կամ ներքին սեղմանները, եթե իհարկե առկա են մկանների վնասման կասկած:

Կինը պետք է լինի լիթոտոմիայի դիրքով, ինչը կապահովի ադեկվատ վիզուալիզացիա վնասվածքի գնահատման և այն վերականգնելու համար: Այս դիրքում կինը պետք է լինի այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ է տրավմայի գնահատման և նրա վերականգնման համար: Հետազոտությունը և դրա ~~արդյունքները~~ արդյունքները պետք է ամբողջությամբ գրառվեն, ցանկալի է պատկերավոր կերպով:

Եթե կա որևէ կասկած կապված վնասվածքի կամ նրա աստիճանի հետ, ապա կինը պետք է զննվի ավելի փորձառու մասնագետի կողմից:

Հեշտոցային ծննդաբերությունից հետո հետանցքի սեղմանի և անոռեկտալ լորձաթաղանթի վնասվածքները չեն կարող բացառվել առանց ռեկտալ հետազոտության: Դասընթացների և տվյալների ավելացումը մեծացնում է ՀՄՎ-ի ախտորոշումը: Մեկ գործնական դասընթացը կարող է մեծացնել կրկնակի անգամ ախտորոշումը [4,35]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)**

Ներհետանցքային ՈւՁՀ-ի կիրառումից հետո սոնոգրաֆիկ հնարավոր է եղել ախտորոշել հեշտոցային ծննդաբերությունների ժամանակ հետանցքի սեղմանի սուբնորմալ վիճակներ՝ շուրջ 33%: Սակայն անմիջապես ծննդաբերությունից հետո այն չունի մեծ առավելություն մատնային հետազոտության նկատմամբ: Սակայն ամեն

դեպքում ներհետանցքային ՈւՁՀ-ն պետք է դիտարկել որպես հետազոտության մեթոդ ծննդաբերությունից հետո [36,37]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 3)**

ՀՍՄՎ-ի վերականգնումը

Հիմնական առանձնահատկությունները

3-րդ և 4-րդ աստիճանի վնասվածքների վերականգնումը պետք է կատարվի լավ պատրաստված բժշկի կողմից կամ նրա հսկողությամբ: *(խորհուրդի ուժը՝ 1)*

Վերականգնումը պետք է կատարվի վիրասրահում, տեղային կամ ընդհանուր անզգայացման տակ, նորմալ լուսավորությամբ և համապատասխան գործիքներով: Եթե կա առատ արյունահոսություն, ապա հեշտոցում **պետոքայետք** է տեղադրվի տամպոն և կինը անմիջապես պետք է տեղափոխվի վիրասրահ: ՀՍՄՎ-ի վերականգնումը ծնարանում պետք է իրականացվի միայն որոշակի հանգամանքներում ավագ մանկաբարձի հետ քննարկելուց հետո: *(խորհուրդի ուժը՝ 1)*

ՀՍՄՎ-ի վերականգնման ժամանակ պետք է խուսափել ութածն կարի կիրառումից, քանի որ այն **իր բնույթով վառ-ուժեղ** հեմոստատիկ է և կարող է առաջացնել հյուսվածքների իշեմիա: *(խորհուրդի ուժը՝ 1)*

Վերականգնումից հետո պետք է կատարել ռեկտալ հետազոտություն՝ համոզվելու համար, որ կարերը չեն տեղադրվել անոռեկտալ լորձաթաղանթի միջով: Եթե հայտնաբերվել է կար, այն պետք է **այն**-հեռացնել: *(խորհուրդի ուժը՝ 1)*

Կոլոռեկտալ վիրաբույժի մասնակցությունը պետք է համաձայնեցվի գործող ուղեցույցների հետ՝ հաշվի առնելով, որ շատ կոլոռեկտալ վիրաբույժներ ծանոթ չեն ՀՍՄՎ-ին [38]: Վերականգնումը պետք է տեղի ունենա վիրահասարահում՝ օպտիմալ պայմաններում, լավ լուսավորությամբ և համապատասխան գործիքներով: Տեղային կամ ընդհանուր անզգայացմումը կնպաստի մկանների թուլացման, և հետանցքի սեղմանի պատռված մասերի համադրման [13]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 4)**

Անոռեկտալ լորձաթաղանթի **վերականգնման վերականգնման** տեխնիկա

Անոռեկտալ լորձաթաղանթի վնասվածքները պետք է վերականգնել օգտագործելով անընդհատ կար, կամ հանգուցակար: (խորհուրդի ուժը՝ I)

Գործնական մեթոդ է համարվում հետանցքի լորձաթաղանթի կարումը հանգուցակարերով՝ կապը դնելով հետանցքի խողովակում: Սակայն այս մեթոդը արդիական էր, երբ կարելիս օգտագործվում էր կետգուտ և պետք է նվազագույն հասցվեր հյուսվածքային գրգռվածությունը և ինֆեկցիան [39]: Պոլիզակտինի առկայության ~~պայմաններում~~պայմաններում այն անհրաժեշտություն չի համարվում, քանի որ ներծծվում է հիդրոլիզի արդյունքում: Ութաձև կարերից պետք է խուսափել ցանկացած դեպքում: **(Ապացուցողականության մակարդակը՝ 4)**

Հետանցքի ներքին սեղմանի վերականգնման տեխնիկա

Եթե հայտնաբերվել է հետանցքի ներքին սեղմանի վնասվածք, ցանկալի է կիրառել հանգուցակար կամ ~~մատրեսային–մատրասային~~ կար (mattress sutures)՝ առանց շերտերը միմյանց վրա կարելու: (խորհուրդի ուժը՝ C)

1999 թ-ին Սուլթանը առաջին անգամ նկարագրել է ՀՆԱ-ի վերականգնման ծայրը ծայրին մեթոդը [40]: Դրանից հետո մի շարք ուսումնասիրություններ ցույց տվեցին, որ այս մեթոդը լավացնում է կղապահությունը [9,12]: **(Ապացուցողականության մակարդակը՝ 2+)**

Հետանցքի արտաքին սեղմանի վերականգնման տեխնիկա

Հետանցքի արտաքին սեղմանի ամբողջ հաստությամբ վերականգնման համար պետք է օգտվել շերտերը միմյանց վրա ~~համադրելով–համադրման~~ կամ ծայրը-ծայրին տեխնիկայից: (խորհուրդի ուժը՝ A)

Ոչ լրիվ (թուր 3a և որոշ 3b) հաստությամբ վնասվածքի ~~վերականգնման~~վերականգնման համար պետք է օգտվել ծայրը-ծայրին տեխնիկայից: **(խորհուրդի ուժը՝ D)**

Կոհրեյնի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ չկա տարբերություն ծայրը-ծայրին և շերտերը միմյանց վրա կարելու մեթոդների մեջ: Ուստի այդ մեթոդներն էլ

~~կառեիկարելի~~ է օգտագործել ՀԱՍ-ի վերականգնման համար: [41]
(Ապացուցողականության մակարդակը՝ 1++)

Կարանյութի ընտրություն

~~3-0 պոլիգլակտինը հարկավոր է օգտագործել~~ ա Անոռեկտալ շրջանի լորձաթաղանթի վերականգնման համար հարկավոր օգտագործել է 3-0 պոլիգլակտինը, քանի որ այն առավել ալվելի քիչ է առաջացնում գրգռվածություն և դիսկոմֆորտ, քան պոլիդիոքսանոնը (PDS): (խորհուրդի ուժը՝ D)

Formatted: Armenian

Մոնոֆիլամենտ թելերով՝ ինչպիսին է 3-0 PDS-ը, կամ պոլիֆիլամենտ թելերով՝ ինչպիսին է 2-0 պոլիգլակտինը, հետանցքի ներքին և/կամ արտաքին սեղմանը վերականգնելիս արդյունքները համարժեք են: (խորհուրդի ուժը՝ B)

Հետանցքի սեղմանի մանկաբարձական պատռվածքները վերականգնելիս ցանկալի է օգտագործել շեքի մակերեսային մկանների տակ խորասուզվող խորասուզող կարեր խուսափելու համար մաշկի շեքի մակերեսային մկանների տակ մաշկի վրա կարերի դուրս գալուց խուսափելու համար: (խորհուրդի ուժը՝ B)

Formatted: Not Highlight

Formatted: Not Highlight

Անոռեկտալ շրջանի լորձաթաղանթի վերականգնման համար PDS կարերի օգտագործումից հարկավոր է հրաժարվել, քանի որ այն ալվելի երկար է ներծծվում և կարող է առաջացնել դիսկոմֆորտ հետանցքի շրջանում [39]: (Ապացուցողականության մակարդակը՝ 4)

Չկան համակարգային վերանայումներ, որոնք կգնահատեին, թե որ թելերն են համարվում լավագույնը հետանցքի արտաքին սեղմանի վերականգնման համար: Միայն ՊԲՎՓ, համեմատելու համար Vicryl® (3-0 պոլիգլակտին Ethicon, Somerville, New Jersey, USA) և PDS-ը, ցույց են տվել կարերից հնարավոր առաջացող էական բարդությունների տարբերության բացակայությունը 6 շաբաթվա ընթացքում և աղիքային կլինիկայի տարբերության բացակայությունը 6-12 ամիսներին [42]: Չկան համակարգային վերանայումներ կամ ՊԲՎՓ, որոնք կգնահատեին կարանյութերի կիրառումը հետանցքի արտաքին սեղմանի վերականգնման ժամանակ: Հետանցքի արտաքին սեղմանի վերականգնման համար կարանյութերի օգտագործումը՝ ինչպիսին է 3-0 PDS-ը և 2-0 պոլիգլակտինը (Vicryl®), կարող են առաջացնել նվազ գրգռվածություն գրգռվածություն և

